«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն
«ԵԼՔ» դաշինք
«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք
Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք
Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն
Հայաստանի Կոմունիստական կուսակցություն
Հայաստանի Հանրապետական կուսակցություն
«Հայկական Վերածնունդ» կուսակցություն
«Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» դաշինք

Հրապարակային կոչ
2017 խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին

2013թ.-ին ստեղծվել և գործում է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը, որի նպատակն է նպաստել ընտրական իրավունքի պաշտպանությանը և ազատ, արդար ու թափանցիկ ընտրական գործընթացների անցկացմանը: Նախաձեռնությունն իրականացնում է հանրային վերահսկողություն ընտրական գործընթացների նկատմամբ՝ կանխարգելելով ու արձանագրելով քվեարկության ընթացքում ընտրակեղծիքներն ու ընտրախախտումները, անմիջապես առցանց ռեժիմով հրապարակելով ընտրախախտումներն ու դրանց աշխարհագրությունը, ինչպես նաև ներկայացնելով դիմում-բողոքներ համապատասխան ընտրական հանձնաժողովներ, դատարան և իրավապահ մարմիններ: Իր գործունեության ընթացքում «Քաղաքացի դիտորդը» վերահսկողություն է իրականացրել Հայաստանի 100 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում:

2017թ. ապրիլին խորհրդարանական ընտրությունների ընթացքում «Քաղաքացի դիտորդը» հանդես է գալու աննախադեպ մեծ կազմով դիտորդական առաքելությամբ՝ հսկողություն իրականացնելով առնվազն 1500 ընտրատեղամասում:

Սույնով դիմում ենք ընտրություններին մասնակից բոլոր քաղաքական կուսակցություններին ու դաշինքներին՝ կոչ անելով միավորել ջանքերը ընտրական գործընթացների օրինականության վերահսկման գործում:

Ձեր համաձայնությունն ստանալու դեպքում պատրաստ ենք քննարկել հնարավոր համագործակցության եղանակները, ինչպես նաև կիսել մեր կողմից մշակված ընտրախախտումների կանխարգելման ու ընտրակեղծիքների արձագանքման գործիքներն ու մեթոդները, տրամադրել իրավաբանական աջակցություն քվեարկության օրը և հետընտրական գործընթացներում:

Խնդրում ենք սույն նամակին արձագանքել մինչև մարտի 15-ը՝ էլեկտրոնային փոստի info@transparency.am հասցեով կամ կապվել «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի հաղորդակցության ու ջատագովության համակարգող Հայկակ Արշամյանին՝ 091439050 հեռախոսահամարով:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Իրավունքի Եվրոպա միավորում» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև համագործակից այլ կազմակերպությունների ու միավորումների ոչ ֆորմալ միություն է:

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ
Լուսինե Հակոբյան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն
Սոնա Այվազյան

Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ
Լևոն Բարսեղյան